ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ԳԵ-290 և ԳԵ-126 տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների, տրանսպորտային ծառայության վարչական հատվածի և պահակատան /անցակետի/ շենքերի վերանորոգման աշխատանքների /այսուհետ՝ Աշխատանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 20.01.2020 ժամը 12.00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Վ. Ավետիսյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Սահակյանը
Գ. Սահակյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Գևորգյանը
Գ. Զաքարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 17.01.2020 հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ Հեր-Մուշ շին, Լուսի Արեգ, Հարեհաս ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից՝ Հեր-Մուշ շին, Լուսի Արեգ, Հարեհաս ՍՊ ընկերություններից, պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 20.01.2020 ժամը 12.00-ին, էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2. **Հանձնաժողովն արձանագրեց.**

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ Հեր-Մուշ շին, Լուսի Արեգ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ **ստացվել է դրական եզրակացություն:**

2.2 Հարեհաս ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է **բացասական** եզրակացություն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային պարտավորությունների մասով պարտքը կազմում է 616, 269 ՀՀ դրամ **/կցվում է/:**

3. **Հանձնաժողովը որոշեց.**

3.1 Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ նիստը կասեցնել երեք աշխատանքային օրով և Հարեհաս ՍՊ ընկերությանն առաջարկել շտկել հարկային պարտավորությունների վերաբերյալ առկա անհամապատասխանությունը և հանձնաժողովին ներկայացնել Կոմիտեից ստացված տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

4. <u>Հանձնաժողովն արձանագրեց.</u>

4.1 Հարեհաս ՍՊ ընկերությանն կողմից սահմանված ժամկետում ստացվել է հարկային պարտավորությունների վերաբերյալ Կոմիտեից նոր տեղեկատվություն պարունակող բնօրինակից արտատպված (սկանավորված) փաստաթուղթը /կցվում է/:

4.2 Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ Հեր-Մուշ շին, Լուսի Արեգ, Հարեհաս ՍՊ ընկերությունները, սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում, որում հայտնաբերվել են անհամապատասխանություններ.

Հեր-Մուշ ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/35 ծածկագրով հրավերով սահմանված որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Բացակայում է 14.12.2018թ. թիվ ՀՀ ԳՄ ԳՀԱՇՁԲ-18/03 պայմանագրի էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը:
2. **Հավելված 3.1 –ին կցված փաստաթղթեր**
   - ✓ Ինքնաթափի (Зил ММЗ-450-21 06 US 013) վարձակալության 01.06.2016թ. թիվ 2 պայմանագրում բացակայում է Վարձակալի /**Հեր-Մուշ ՍՊԸ**/ կնիքը, Վարձատուի /Գրիգոր Գափոյան/ ստորագրությունը, ինչպես նաև անձնագիրը ժամկետանց է:
   - ✓ Ավտոկռունկի (МАЗ 5337 մակնիշի 31 SU546 պետհամարանիշով) վարձակալության աշխատանքային պայմանագիրը թերի է լրացված
3. **Հավելված 3.2**

Բացակայում են ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/35 ծածկագրով հրավերով պահանջվող հետևյալ փաստաթղթերը, մասնավորապես.

<u>**Վանիկ Ջուղեցյան.**</u>

1. Բարձրագույն կրթությամբ Ինժեներ-շինարարի որակավորումը հավաստող փաստաթուղթը (դիպլոմ),
2. Աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը (քացվածք աշխատանքային գրքույկից՝ Աշխղեկի 3 տարվա աշխատանքային փորձի առկայություն)

<u>**Գևորգ Մնացականյան**</u> Աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը (քացվածք աշխատանքային գրքույկից՝ էլեկտրիկի՝ 3 տարվա աշխատանքային փորձի առկայությամբ)

<u>**Զավեն Բալագոզյան**</u> Աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը (քացվածք աշխատանքային գրքույկից՝ սանտեխնիկի՝ 3 տարվա աշխատանքային փորձի առկայությամբ)

<u>**Վարդգես Չանդոյան**</u> Աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը (քացվածք աշխատանքային գրքույկից՝ ծեփագործ՝ 3 տարվա աշխատանքային փորձի առկայությամբ)

<u>**Հովհաննես Չանդոյան**</u> Աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը (քացվածք աշխատանքային գրքույկից՝ ծեփագործ՝ 3 տարվա աշխատանքային փորձի առկայությամբ)

<u>**Հովհաննես Ղարաբաղցյան**</u> Աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը (քացվածք աշխատանքային գրքույկից՝ ներկարար՝ 3 տարվա աշխատանքային փորձի առկայությամբ)

<u>**Բեգլար Հովեյան**</u> Աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը (քացվածք աշխատանքային գրքույկից՝ ներկարար՝ 3 տարվա աշխատանքային փորձի առկայությամբ), անձնագիրը բացակայում է

Հարեհաս ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/35 ծածկագրով հրավերով սահմանված որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են **հետևյալ անհամապատասխանությունները.**

1. Բացակայում է Սուրեն Գասպարյանի բարձրագույն կրթությամբ Ինժեներ-շինարարի որակավորումը հավաստող փաստաթուղթը (<u>**դիպլոմ**</u>)
2. **Հավելված 3.2**-ում նշված չէ զորողի անուն-ազգանունը, բացակայում են Սուրեն Գասպարյանի և Հայկազ Սարգսյանի տվյալները պարունակող աշխատանքային գրքույկի առաջին էջերը:

Լուսի-Արեգ ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/35 ծածկագրով հրավերով սահմանված որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1. **Հավելված 3.1**-ում ЗИЛ ММЗ 4505 ավտոմեքենային պետհամարանիշը սխալ է նշված:
2. **Մնացական Հակոբյան՝** ներկայացվել է շինարարական տեխնիկումի դիպլոմ, որտեղ որակավորումը նշված է տեխնիկ-շինարար այն դեպքում, երբ հրավերով պահանջվել էր բարձրագույն կրթությամբ ինժեներ-շինարար:

5. Հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստը կասեցնել երեք աշխատանքային օրով և Հեր-Մուշ շին, Լուսի Արեգ, Հարեհաս ՍՊ ընկերություններին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Նիստը շարունակվել է 31.01.2020 թ.

6. Հանձնաժողովն արձանագրեց

6.1 Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված շտկված փաստաթղթերը **/կցվում են/:**

7. Հանձնաժողովը որոշեց.

7.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով Հարեհաս ՍՊ ընկերության կողմից ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ Կոմիտեից նոր տեղեկատվություն պարունակող՝ սույն արձանագրության 4.1 կետով նշված փաստաթուղթը և Հեր-Մուշ շին, Լուսի Արեգ, Հարեհաս ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հրավերով պահանջվող շտկված փաստաթղթերը գնահատել բավարար, և

- Հեր-Մուշ շին ՍՊ ընկերությանը՝ 1-ին չափաբաժնով,
- Լուսի Արեգ ՍՊ ընկերությանը՝ 2-րդ չափաբաժնով
- Հարեհաս ՍՊ ընկերությանը՝ 3-րդ և 4-րդ չափաբաժիններով **ճանաչել ընտրված մասնակիցներ:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

7.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստերը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով **/կցվում են/:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Ավետիսյան

_____ Ռ. Սահակյան

անդամներ՝ _____ Գ. Սահակյան

_____ Ա. Գևորգյան

_____ Գ. Զաքարյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան